Աշխեն Քեշիշյան

Երբեմն հրեշտակն ընկնում է իմ ուսերից

***

Երբեմն հրեշտակն ընկնում է իմ ուսերից,

երբեմն ուղղակի թեթև

քերծում է մարմինը,

երբեմն կոտրում է թևերը,

երբեմն ես մոռանում եմ

նրան ու

քայլում միայնակ:

Երբեմն ետ եմ վերադառնում,

օգնում եմ բարձրանա,

մաքրում եմ վերքերը,

մաքրում արցունքները,

նստեցնում եմ ուսերիս

ու գնում առաջ:

***

Քայլում եմ նախաստեղծ

ջրերից թաց հողի վրա,

դեպի քեզ՝

բացելով առաջին արահետը

Երկրի վրա:

Մարմինս ջուր

ու հող է բուրում.

Երկրում

դեռ ոչ ոք չէր երազել

մեզնից բացի:

***

Ձմեռվա հետ կաթնագույն մշուշն էլ

արդեն հեռացավ:

Ես սպասման օրերն այս

կում-կում խմում եմ՝

ամենենին առանց տխրության,

այլ՝ լուռ վայելելով:

Մազերցս մաքրում եմ

մշուշի վերջին փշուրները:

Քամում եմ մազերս մշուշից,

քայլում եմ գարնանն ընդառաջ:

***

Մի օր,
երբ փակես տանդ դուռը,
ու դուրս գաս փնտրելու . . .

կանգնի՛ր աշխարհի ցանկացած
գետի առջև,
երկար կանգնիր
կխաղաղվես:

***

Երբ դու և դուռը

երկար

նայեք ու լռեք

միասին

փակ մնալու,

կամ բացելու

իմաստը կկորի:

***

Գետը

որ իմ

երազի շարունակությունն է.

Հպվիր ձեռքերով ջրերին նրա,

լվա երեսդ երազով

իմ:

նայիր գետի հայելուն:

ժպտա:

գնա առաջ: